Սիրելի Վարդուհի, կարծեմ այս նամակով կարողացայ Քեզ որոշ գաղափար տալ գիւղական տների և այլ երևոյթների մասին, որոնք գիտեմ, այնքան էլ մխիթարական չեն Քեզ համար։

Բայց սիրելիս, կարծում եմ, Դու աւելի պիտի տխրես, եթէ Քեզ նկարագրեմ իւրաքանչիւր գիւղն առանձին-առանձին, որի հետ ես պիտի տամ Քեզ և հարստահարութիւնների պատկերը. դրանով իմ նպատակն է ցոյց տալ Քեզ, թէ մեր չարքաշ աշխատաւորները պարսիկ առաքաների ձեռքի տակ օրըստօրէ ինչպէս քայքայւում են և հիւծւում։

Այսօրւայ պտոյտն ինձ շատ է յոգնեցրել և արդէն գիշերւայ ժամը 1-ն է. վաղուց է, ինչ գիւղում ամենքը քուն են մտել. ես էլ մտնում եմ անկողին, մի քիչ հանգստանալու։

Բարի գիշեր սիրելիս,

Քո՝

ԱՐԱՄ

Փէրիա-Վերին Խոյգան, 23 *Սեպտեմբեր*, 1918.

Թանկագին Վարդուհի,

Ինչպէս նախորդ նամակով խոստացել էի, այս անգամ Քեզ պիտի գրեմ հայաբնակ գիւղերի մասին։ Ես անցայ բոլոր գիւղերը, օրերով ապրեցի նրանց ծոցում, մասնակից եղայ գիւղացիների առօրեայ կեանքին և վշտերին, տեսայ կատարւող անասելի հարստահարութիւնները պարսիկ բռնակալ խաների ձեռքով և այլ բազմաթիւ տխուր երևոյթներ, որոնք ինձ շատ տխրեցրին և դարձրին դէպի կեանքը յոռետես։

Դու կը տեսնես այդ տխուր երևոյթներն այս իմ նամակում, որոնք հաւատացած եմ Քո սիրտն էլ պիտի տրխրեցնեն։ Այս անգամ, հակառակ իմ ցանկութեան շատ եր-